թիւն դարերի: Պահանջները փոխոելով, նա փոխեց եւ իր պարապմունքների ձեւը: Արեան հետ խաղացող մարդը այժմ զբաղոած էր երկրի մշակութիւնով:

Նա իր տան լուսամուտներից ամէն օր տեսնում էր Ոստանի հին ամրոցի աւերակները, տեսնում էր իր նախահարց, Ղարա-Մելիքների, խորտակոած իշխանութեան բեկորները: Նա այդ փլատակների մօտ հիմնեց ոչ թէ ամրոց, այլ մի տուն, որ գիւղատնտեսական բոլոր յարմարութիւններն ունէր: Նրա նախնիքը ժողովուրդ էին կառավարում, իսկ նա կառավարում էր այժմ մի բարեկարգ, օրինակելի տնտեսութիւն:

Տան գլխաւոր դռան սեմի մօտ, որ նայում էր դէպի պարտէզը, նստած էր մի պառաւ կին: Վաղորդեան արեգակի ջերմ ճառագայթները կորչում էին նրա պղնձեայ դէմքի խորին կնճիռների մէջ: ճերմակ յօնքերի երկար մազերը, միախառնոելով դեռ իրանց սեւ գոյնը պահպանած թերթերունքների հետ, մի առանձին վսեմութեան էին տալիս նրա խորախորհուրդ աչքերին: Նա նստած էր անշարժ, որպէս մտածութեան արձանը: Նայում էր դէպի գեղեցիկ պարտէզը, ուր աշխատում էր Կարօն: Նայում էր դէպի սիրունիկ երեխաները, որ պտտւում էին նրա շուրջը, նայում էր դէպի կանաչ լայնածաւալ անդաստանները, որ Կարօյի մշակութեան արդիւնք էին, նայում էր դէպի բլուրների վրայ արածացող անասունները, որ Կարօյի ախոռատնից էին դուրս եկել: Նայում էր, եւ պառաւի երկար տարիներով վշտացած սիրտը լցւում էր անսահման մխիթարութեամբ: Որքա՜ն տանջանք, որքա՜ն հալածանք էր կրել այդ զառամեալ պառաւը... որքա՜ն թափառել էր նա... իսկ այսօր տեսնում էր իր դառն աշխատութիւնների քաղցր պտուղը եւ ուրախանում էր:

Դա պառաւ Սուսանն էր:

Այստեղից երեւում էր գիւղը: Առաւօտեան կիսամռայլի մէջ նա աւելի գեղեցիկ էր երեւում: Այլեւս հին, գետնափոր խրճիթները չկային: Այնտեղ, ներքեւում, մի հովտաձեւ տափարակի վրայ, մինը միւսի մօտ՝ շարքով բարձրանում էին ծառազարդ տները, ուղիղ եւ լայն փողոցների վրայ: Շինական կոկիկ եկեղեցին, նրա մօտ դպրոցի շէնքը, աչք էին շլացնում: Առողջ գիւղացիները մաքուր հագնոած, իւրաքանչիւրը գոհ եւ ուրախ, դիմում էին իրանց գործին: Կարծես, ամէն օր այդ մարդկանց համար տօն էր, կարծես, նրանք երբեք վիշտ ու նեղութիւն չէին տեսել:

Պառաւը շարունակում էր նայել: